

ներուն: իր զգացումները զորս երբեմն
դատողութեան հետ ալ միացած կը գրու-
նեմ, եւ քողածածուկ, ոչ յանդուգն, քիչ
մը հեգնական ընդվզումով զոր միշտ զսպել

կ'աշխատի, կ'երեւի հոս ու հոն քառեակի
մը վերջին տողին մէջ: Առ այդ օրինակներ
չեմ բերեր, միայն ուշադրութեան կը յանձ-
նեմ իր մէկ քառեակը.

Ճանապարհորդ քեզ յայն ժամ ասեմ որ զճանապարհի հատըն գիտենաս,
Ծնել ես ւ աշխարհս եկել տուր խարար թէ ուստի՞ կուգաս:
Եկել ես յաւտար երկիր մէկ ցուցու թէ յինչ կու կենաս,
Մեռնիս դու ւ ի հող մանկա մէկ ասայ թէ յո՞ւր կու գնաս:

ասկէ զատ շատեր կան, տող մը, բառ մը՝
ուր դատողութիւնը կու գայ խայտաւի պէս
հարցնել մինչեւ անպատասխան յուսահա-
տիլը ու վայրկեան մը միայն յոգնելէ վերջ
նուիրուիլ կրօնքին, աւանդութեանց առ-
այդ տուած պատասխաններով համոզման:
Ասիկա երեւոյթ մըն է որ ժողովրդական
ստեղծագործութեան մէջ պիտի չերեւար.
վասն զի ժողովուրդը հաւատքը խնդրոյ
նիւթ չ'ըներ ունենալով Աստուած կամ
աստուածներ պիտի գոհանար ուրկէ՝ գա-
լու, ինչո՞ւ համար կամ ո՞ւր երթալու պէս
յաւիտենական ու խորհրդաւոր հարցում-
ներուն՝ ունեցած հաւատքով եւ աւանդու-
թիւններով:

Այս քառեակները որ Պարսիկ տաղա-
սացութեան մասնիկներու հայացած ձեւերը
կը ներկայացնեն, արտադրութիւնն ըլլալու
են թ. Կամ թ. Դարու հեղինակի մը: Հե-
ղինակի մը՝ սիրուած, ժողովրդական, որ

վարժուած էր կրօնական դպրութեան մէջ,
փորձուած կեանքին մէջ, նաշակած անոր
դառնութիւնները, արար աշխարհ տեսած,
իր երկրին ու ազգակիցներուն վարք ու
բարքին մօտէն եւ լաւատեղեակ: Վերջա-
պէս միամիտ աշուղ մը չէ ան, այլ իրապէս
խորհող գրող մը, որ կրնայ վերլուծել, մեկ-
նաբանել կեանք, կրօնք, զգացում:

Այս քառեակները վերջապէս աղբիւր
են Հայ ազգագրութեան, լեզուաբանու-
թեան, առակախօսութեան եւ նաեւ ար-
հեստի ու արուեստի ուսումնասիրութեան
համար: Նիստ ու կաց, կահկարասի, գոր-
ծիքներ եւն. հոն բազմիցս կը յայտնուին,
որոնցմէ կարելի է օգտուիլ ուսումնասի-
րութեանց համար:

Ուրիշ տաղաշարքներ ալ ուրիշ առթիւ:
Կը շարունակեմ զանոնք Քուչակեան ան-
ունել միայն հետեւելով ընդունուած կա-
նոնին:

1932, Wichita, Kansas. U. S. A.

Յ. ՔԻՐՈՍՏԵԱՆ



ՕՐՈՒԱՆ ԳՐԵՐ

«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ»

Վան - Վասպուրականի Ապրիլեան հերոսամարտի
տասնհինգամեակին առթիւ (1915 - 1930). հեղինակ՝
ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆ. 413 էջ «Բազմավէպ»ի ծաւալով.
դին. 2 տուար. Տպ. Մխիթարեան, Վենետիկ - Ս.
Ղազար.

Վասպուրականի հերոսամարտին գրա-
կան յուշարձանը, որուն վարպետ ճար-
տարպետն է բանասէր ազգագրագէտ
Հայկ Աճէմեանը, ձօնուած է յիշատակին
անոնց, որոնք ընկան հայրենիքի ազա-
տութեան ճանապարհին: Վասպուրականցի
հերոսներու գերազանցապէս աննման հե-
րոսամարտի համայնապատկերը քանդակ-
ուած է հոն: Յաղթանակի և պարտու-
թեան շարժանկարը իր շողերով, իր ըս-
տուերներով պատմութեան հարազատ
ճշմարտութեան հաւատարիմ մնացած է:

Ա

Երկու պատկերներ գրքին մուտքին
կանգնած են, Հայրիկ՝ յեղափոխութեան
հաւատքով սպառազէն, Անդրանիկ՝ հայ
յաղթանակներու վստահութեամբ ամրա-
պնդուած:

Վասպուրականի շողին, խունկին, ծաղ-
կին ու արեւին լեզու ու երգ տուող Չի-
թունին քեզ կը համոզէ որ նմանը չկայ
Վասպուրական մեր աշխարհին: Բոլոր
դրախտներու համախումբ պարտէզն է...
Վասպուրական մեր աշխարհը, ուր ամէն
բան խաչ, շէն ու ջուր է հայաշունչ, ուր
ամէն տունկ ու այգի դրախտագեղ, ծառ
ծաղիկներովը խօրօտիկ: «Չայն տուր, ո՞վ
ծովակ, ինչո՞ւ լռում ես...». ինչո՞ւ կը
լռես, պատմէ վանայ քաղաքին օրհնած
գեղեցկութեան պատմութիւնը: Չիթունին
ազգագրական կերպասին վրայ կը թըր-
թոացնէ իր վրձինը և կը նկարէ վանայ
ու Վասպուրականի լուսապսակ պատկե-

րը, օրրան ու բեմ հայ ցեղի նախահայ-
րերուն:

Արմենակ փոխարեան մանրամասնօրէն
կը գրէ վանեցիներուն ռազմական պա-
տրաստութեան պատմութիւնը: Հարկ է
անաչառօրէն և առանց դիտումներու և
նախապաշարումներու կարգալ «Վասպու-
րական»ը. փոխարեան իր պատմութեան
մէջ անխտիր կը յիշէ հայ կուսակցութեանց
անձնուէր գործունէութեան նկարագիրը:
Վանեցիներուն կ'աջակցին ուրիշ գաւառ-
ներէ հասնող վարիչներ և գործիչներ:
Վռամեան, Արամ ու Իշխան դիւանագէտ
դիտումներով հալածանքէն առաջ հայ ե-
րիտասարդութիւնը Ռուս ճակատին դէմ
կը մղեն, զանոնք կը զինեն և թուրք
բանակին կ'օգնեն: Ճէվտէթ, Վանի հայ-
ատեաց թուրք կուսակալը չկրցաւ օգտուիլ
հայ կտրիճ ռազմիկներէն. և նենգութեամբ
մորթեց հայ գործիչներու վարչապետ Իշ-
խանը և Վռամեանը: Ասով հանդերձ հայ
կուսակցութեանց ռազմիկները առանց
վարանումի, զէնք ձուլեցին, թնդանօթներ
ձուլեցին և ճակատամարտ մղեցին թուրք
բանակին դէմ:

Հաւասարակշռութիւն չկար այդ երկու
թշնամի բանակներուն մէջ. հայուն կա-
տարածը իսկապէս դիւցազնութիւն էր:
Վանեցին ամէն գնով կ'աշխատէր վանն
ու Վասպուրականը պաշտպանել: Պէտք է
խոստովանիլ որ շնորհիւ հայ յեղափոխա-
կան գործիչներու՝ Հայաստանի այդ դրախ-
տանման երկիրը յառաջադիմած էր ամէն
տեսակէտով. Օսմանեան Սահմանադրու-
թենէն քիչ առաջ և վերջը այդ գաւառին
մէջ կը հրատարակուէին խմորատիպ թեր-
թեր՝ «Նոր-Սերունդ», «Հայկացք», «Ծո-
վակ», «Կուլակ», «Երկունք», «Զգոտում»,
«Գաւառի Չայն», «Տիգրիս», «Աշխա-
տանք», «Վան-Տոպ»։ ունէին գրադա-
րաններ՝ «Հայրիկեան», «Աշխտիսեան»,
«Մարտիկեան», «Ախպեր», «Ռաֆայէլ»,
«Շատախ», «Երկար»: Կուսակալ Ճէվտէթ
չար աչքով կը դիտէր հայ մտքի այդ յե-
ղաշրջումի պատկերը. սաստելու համար,
նախ քան մեծ աղէտը՝ մէկ քանի հայե-

րու ոտքերը կը պայտէր . այդ հրէշային բարբարոսութեան համար ժողովուրդը ա- նոր « Նալբանդ » մակդիրը կու տար : Վանեցիները զարմանալիօրէն կ'ըմբոստա- նան եւ պատերազմի ամենէն կրակոտ պահուն ինքնապաշտպանութեամբ կոռու- լով կ'ապրին : Հրաշքը երկար չի տեւեր . թշնամին ունէր անսպառ ուժ , կոռուելու միջոց , կանոնաւոր բանակ եւ իրեն ա- ջակից ռազմիկ մեծ պետութիւն մը՝ Վիլ- հէլմի գերմանացիները : Մեր յեղափոխա- կան զինուորներն անտարակոյս գիտէին որ անկարելի էր դիմադրել , բայց միեւ- նոյն ատեն վատութեամբ մորթուելու չէին երթար թուրքին սպանդանոցը , ինքնա- պաշտպանութիւնը անհրաժեշտ էր , կը դիմադրէին յուսալով որ ռուս բանակէն կամաւորներ օգնութեան կը հասնէին : Կը յաղթեն հայ ռազմիկները , գերմարդկային էր հայկական յաղթանակը . եօթնասուն օր վանեցի հայութիւնը անկախութեան հայ զրօշին տակ սրտազրաւ դիպազնա- կան օրեր կ'ապրէր :

Ճէվտէթ խոցուած սրտով կը բացա- գանչէ . « Կառավարութեան նամուսը քա- ղաքին մէջ պաթմիշ եղաւ » :

Հայկ կոստյեան հերոսամարտի յաղթա- կան յուշարձանը կը քանդակէ , տիկին , վարդապետ ու ռազմիկ կը քաջագործեն :

Հայ փոքրաթիւ ռազմիկները Արճաիի եւ թիմարի շրջաններուն մէջ կը փրկեն ժողովուրդը ընդհանուր ջարդէն , ինչպէս որ կը պատմէ Արմենակ Փոխարեան :

Որքան կ'ուժովայ հայկական ինքնա- պաշտպանութեան հոգին , թուրքն այնքան կը կրկնապատկէ իր ջոկատները եւ թըն- դանօթները : Հայոց Չորի ինքնապաշտ- պանութիւնը սխրալի է . հայ ռազմիկները առանց յուսահատելու յանդգնութեամբ կը դիմադրեն : Ամէն մէկ ռազմիկ ժամերով առանձին կը դիմադրէ եւ տասնեակ մը թուրք զօրքեր չտապալած՝ չի հպատակիր մահուան : Կը զմայլիս հայ ռազմիկները դիպազնութեանց վրայ , ամէնքն ալ խան- դակաթ սիրով՝ անձնուէր կը կռուին հա- լածուած ժողովուրդի փրկութեան համար ,

երկիւղ չունին , յայտնապէս տեսնելով մահը՝ կ'իյնան անոր ճիրաններուն մէջ , զրոգները ահանաւես են . եւ զրաժնին անկեղծ եւ անաչառ . կը յիշեն իրենց քա- ջութիւնները եւ չեն մոռնար իրենց պար- տութիւնները : Այդ ճշմարտապատում գրիչներէն է նաեւ Յակոբ Մ. Մուտոյեանը :

Ահա Շատախի հերոսամարտը . թշնամի թուրքին ամենէն վտանգաւոր համարուած բոյնն է Շատախը . հայ շատախցի իրա- շունքը կը պաշտպանէ իր հատու սուրով : Թուրքը կը դողար շատախցի հայէն , զի ան կը սարսափեցնէր ամենէն կատաղի բուրտ ցեղը : Ճէվտէթ՝ բնականաբար օր առաջ կ'ուզէր քանդել հայ դիպազներու այդ բոյնը : 1909էն սկսեալ հայ յեղա- փոխական կուսակցութիւնները կը պա- տրաստէին հոն քաջակորով ռազմիկներ : Անոնք կ'աշխատէին գէնքեր ճարել , գէն- քեր պատրաստել ինքնապաշտպանութեան համար :

Շատախցի հայը գէնքով եւ զրչով ըս- պառագինուած էր . 1908ին կըթական գործը հոն շատ առաջ կ'երթայ . շա- տախցիները կ'ունենան իրենց յատուկ խմորատիպ թերթերը՝ « Տիգրիս » եւ « Ան- կախ Տիգրիս » . կ'ունենան զրադարան , ընթերցարան , յատուկ բարձրագոյն դա- սակօսութիւններ , թատերական ներկա- յացումներ :

Շատախցի գէնքի եւ կռուի յատուկ սէթ մ'ունէր , որով 10,000 զիւղացիները վեց տարուան շրջանին մէջ ինքնապաշտ- պանութեան գէնքի համար 7000 օտմ. օսկի կը տրամադրեն : Հոն Գաշնակցութիւնը ինքնապաշտպանութեան յատուկ Զինուո- ռական մարմիններ կը կազմակերպէր : Մեծ պատերազմին , շատախցի կը պատրաս- տէր յատուկ թնդանօթներ , անոնց խո- ղովակը հինգ շերտ սպիտակ թիթեղներով շինուած էր , որուն վրայ երկու կարգ հեռագրական թել պատած , եւ այս խո- ղովակն անցուած էր ընկուզի փայտի խողովին մէջ , այդպէս ամրացած թնդա- նօթը տասն անգամ կրակելէ յետոյ , այլ- եւս կը փճանար : Շատախցիներու այդ

Բանաստեղծը ախ քաշելով կ'երգէր .

« Ախ , երբ տեսնեմ կարին նստած հայ իշխան , Հայ տառերով գրէր հայոց հրաման » :

Ո՛չ կարին , այլ վան նստաւ Մայիսի 7ին , 1915 թուականին վանի եւ շրջա- կայ գաւառներու կառավարիչ Արամը . ռուս հրամանատար Նիկոլայեւ կու տար այդ հրամանը : Եւ իշխան Արամը հայ տառերով իր առաջին հրովարտակը կը գրէր ժողովուրդին .

« ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ »

« Քաղաքացիներ ,

Ռուսական յաղթական բանակի առաջ- խաղացումը նոր դարագլուխ եւ իրաւա- կարգ կը բանայ մեր քաղաքի եւ գաւառի իրաւագութիւն ժողովուրդին համար : Դա- րբու ստրկութեան եւ քաղաքական ճըն- շումներու վախճանն է , որ մենք կ'ապրինք այս օրերուն , հայ ժողովուրդի շինարար եւ ստեղծագործ ոգիի ծնունդն է , որ մենք կը տեսնենք այժմ :

« Ռուս զօրքերու հրամանատարը , Գե- ներալ Նիկոլայեւ , գնահատելով վասպու- րականի հայ ժողովրդի հերոսական ջան- քերը՝ թուրք կառավարութիւնը անգոր- դարձնելու իր ազգասպան քաղաքակա- նութեան մէջ եւ հաւանելով հայ ժողո- վուրդի կուլտուրական ձգտումները , բա- րեհաճեցաւ 7 Մայիս , 1915 , թիւ 16 մասնաւոր հրամանագրով ինձ նշանակել քաղաքի եւ շրջանի կառավարիչ եւ կազ- մակերպել նոր գործը իր բոլոր ճիւղերով :

« Այսօր արդէն կազմակերպուեցան ուս- տիկանական , դատական , գիւղատնտեսա- կան , գաղթականական , քաղաքապետա- կան եւ այլ վարչութիւններ :

« Ասով կը յայտարարեմ ամբողջ ժո- ղովուրդին , որ նոր կառավարութիւնը կազմակերպուած ըլլալով , անհրաժեշտ է բոլոր գործերու համար դիմել նոր կա- ռավարութեան յանձնախումբերուն , քա- ղաքի եւ շրջակայքի մէջ բնականոն վի- ճակ ստեղծելու համար :

ստեղծած թնդանօթները « թշնամու դի- քերը հրաշալիօրէն կը քանդեն » : Այսպէս կը գրէր Սամուէլ Մեսրոբեան : Թուրք թշնամին պաշտօնական նամակներով իր տկարութիւնը եւ հայ ռազմիկներու յաղ- թանակը խոստովանելով՝ « զրութիւնը շատ ծանր է » կ'իմացնէ :

Ռազմիկ շատախցի քառասուներկու օր շարունակ կռուելով թշնամին փախուստի կը մատնէ : Հայկական կամաւոր բանակը վան կը մտնէ յաղթական : Շատախի ը- ռած զանգակները կը սկսին դողանջել : Եկեղեցին լեցուած հայ ժողովուրդը փառք կու տայ Աստուծոյ՝ որ յաղթական կը հանդիսանայ հայուն ռազմիկ երիտասար- ղութիւնը :

Սամուէլի վիճակուած է փէսանդաշտի ռազմիկներու քաջագործութեանց նկարա- զրութիւնը : Ինքնապաշտպանութեան հա- մար վան եւ վասպուրական եւ ամէն հայաբնակ գիւղերու եւ քաղաքներու մէջ ժողովուրդն ինքը զինուորի գերը կը կա- տարէ , քար կը կրէ , պատնէշներ կը կազմէ : Փէսանդաշտի մէջ ալ հայ ռազմիկները թշնամին ամօթահար կը վանեն . եւ կ'ող- ջունեն « ազատութեան յաղթանակը Ար- ցունեն թեւերի վրայ , գեղածիծաղ լճակի ափին... » :

Արիս Աբրահամեան մեզի ցոյց կու տայ Գարասուի մէջ թուրք եւ քիւրտ խուժանը , որ արմկելով կը վազէ . տեսարանը խուժ- դուժ , եւ սակայն արիւնարբու խուժանը խանդավառ կ'ուրախանայ տեսնելով հայ գործիչներու ղեկավար Գալոյին գլուխը գաւազանին ծայրն անցած : Ի՞նչ էր Գա- լոյին եւ իր նման գործիչներու յանցանքը , անոնք ապստամբութիւն չէին քարոզեր , անոնք այդ դժոխային վտանգի պահուն՝ կը ջանային քիւրտին ու թուրքին հետ բարեկամանալ եւ եղբայրաբար ապրիլ , եւ երբ անկարելի կ'ըլլար , անոնք ամէն միջոց ի գործ դնելով գաղտնի կը գաղ- թեցնէին անգէն հայ ժողովուրդը :

«Ներկայ պատմական պատասխանա-
տու օրերու մէջ հայ ժողովուրդը միայն
մէկ նշանաբան պիտի ունենայ — համա-
խմբուիլ ամբողջ եռանդով կառավարու-
թեան շուրջը, վերակազմելու համար
կեանքը քաղաքի և շրջանի մէջ, արժանի
լինելու համար քառորդ դարէ աւելի մը-
դուած պայքարին մէջ ինկած հերոսներու
յոյսերուն և յիշատակին հանդէպ, բարձր
պահելու համար հայ ազգի կուլտուրական
պաշտօնի գիտակցութիւնը փոքր Ասիոյ
այս ծայրագաւառին մէջ:

«Ռուս Գինեռալը մեր այս յոյսերուն
իսկական գիտակցութեամբ էր, որ հայ
ժողովուրդի և իմ հանդէպ ցոյց տւեց այս
մեծ վստահութիւնը:

«Քաղաքացիներ, ձեզ կը մնայ մեր
այդ յաւակնութեանց և յոյսերուն ընդ-
առաջ գացող յաղթական բանակի և Գե-
ներալի վստահութիւնը բացարձակապէս
արդարացեալ և աւելի լաւագոյնին ար-
ժանի և պատրաստ գտնուիլ»:

Վանի Շրջանի կառավարիչ
Ա.Ր.Ա.Մ

Դժբախտաբար այս ինքնավարութիւնը
միայն եօթնամսուն օր տեւեց: Հայ նա-
խարարութեան, հայ կառավարութեան
ինքնիշխանութիւնը լաւ կազմակերպուած
էր: Դաւարագեազցի ձերուսագարդ Տէր
Գրիգոր Քահանան խաչն ու սուրը ձեռքին
70 օր միայն իր ձիով կրնայ շրջիլ հայ
կամաւորներու յաղթական գունդին առ-
ջեն անցած:

Այս ուրախ պատկերէն վերջ քարու-
քանդ սրտով կը կարդանք «Վասպուրա-
կան»-ը խմբագրող Հայկ Աճէմեանի «Տա-
րագիր Վասպուրականի» պատմութիւնը,
բանասէրի խղճամիտ գրչով գրուած:

Արմենակ Մաքսապետեան պարծանքով
կը յայտարարէ որ «Վասպուրականի հո-
ղին վրայ, առաջին անգամ, մենք ենք
կազմած Հայ իշխանութիւն, առանց հո-
վանաւորի ու օգնութեան, միայն հայերէ
բաղկացած»:

Աճէմեանի այս «Վասպուրական»-ը

կարդացողը պիտի յիշէ որ հայն ունի
քաջութեան շրջաններ, անցեալ մը շատ
հեռաւոր, ներկայ մը շատ մօտիկ, թէ
անցեալը և թէ ներկայն մեզ կը թելա-
դեն «Չի մոռնանք մեր հողն ու մեր
գործը»:

Սամսոն Անդրանիկի ռազմագէտ ղեկա-
վարութեան մէկ քանի էջերը իրական
գոյներով կ'արձանագրէ. վտանգներու և
շուարուսներու առջեւ Անդրանիկ վճռա-
կան է, յանդուգն և դիւցազնական:

«Վասպուրական»-ի խմբագիրը իր գըր-
քին մէջ կը խտացնէ վերջին հայկական
օրհասին պատմութիւնը. դիմակաւոր քա-
ղաքակրթութիւնը տիեզերական այդ ճգ-
նաժամին հայկական բնաջնջումին վրայ
կը ծիծաղի. Մուշ, Սասուն, Շապին-
Գարահիսար, Մուսա լեռ, Ուրֆա և Հա-
յաստանի ամէն մէկ անկիւն արիւնք կը
հոսի, Արիստակէս Լաստիվերտցիին ողբա-
նուագ պատկերը անհամեմատ կը մեծնայ.

«Սուր եղեալ անօրինացն՝ կոտորեցին
զմայր առ մանկամբ և գորդի առաջի հօր
և առ ժամայն եղեւ քաղաքն բարեշէն՝
գուր արեան»։ Լաստիվերտցիին յիշած այդ
գուրը այս անգամ անյատակ էր: Հայ
ժողովուրդը, հայր, մայր, երիտասարդ ու
տղայ, կին ու աղջիկ դիւցազներ դար-
ձած ինքնապաշտպանութեան դիմեցին.
ուրիշ ելք չկար, քրիստոնեայ կառավա-
րութիւնները մեզի օգնութեան հասնելու
տեղ քրիստոնեաները ջարդող թուրքին
կ'օգնէին: Այս պայմաններուն մէջ հայ-
կական ինքնապաշտպան կռիւը, իրաւամբ
կը կոչուէր «Հայկական հերոսամարտ»
որուն արիւնոտ քանդակները գետեղուած
են Հայկ Աճէմեանի «Վասպուրական»-ին
մէջ: Նահատակ և տարագիր հայութիւնը
իրաւցնէ, այս մեծ եղեռնի ատեն գեր-
մարդկային պայքար մղեց: Մասիս ան-
ձանօթ ծանօթ գրագէտը կը ստուերագրէ
այդ գերագոյն պայքարը. ընթերցողը պահ
մը հպարտութիւն կը զգայ կարդալով մեր
աննման դիւցազններու քաջագործութիւն-
ներուն պատմութիւնը:

Գ

Անշուշտ դիւանագիտութիւն չենք ու-
նեցած, եթէ ունենայինք գուցէ մէկ քիչ
կը մեղմանար մեր ազգին ճակատագրա-
կան հալածանքը: Պարագանքեր կան որ
դիւանագիտութիւնն ալ կարող չէ անը-
պաստ պայմաններուն դեղ ու դարման
ըլլալ: Դիւանագէտ չեղան հայ յեղափո-
խական վարիչները, որով կարելի չեղաւ
միութիւն մը կազմել քրտական ցեղին
հետ. կ'ըսուի. «Եթէ քրտերը մեզ հետ
լինէին համաշխարհային պատերազմի ըն-
թացքին, մեր ձեռնարկները չէին վիժեր
և ներկայ վիճակը այսպէս անփառունակ
չէր լիներ»: Պայմանները չէին ներած,
որով անկարելի կ'ըլլար այդ հայ և քրտ
համերաշխ համագործակցութիւնը: Յեղա-
փոխական կուսակցութիւններէն առաջ այդ
մասին աշխատած են մեր ազգային յայտ-
նի անձնաւորութիւնները. բայց յաջողած
չեն, զի թուրք և օտար կառավարու-
թիւնները՝ քրտերը իրենց գործիք ու-
ղած են ընել, պահելով զայն իր գազա-
նային վիճակին մէջ:

Մեր այս համոզումը պատմականօրէն
կը հաստատէ Դ. Փափագեան:

Ռուբէն Վասպուրականի աշխարհագրա-
կան նկարագրութիւնն ուրուագրելով, կը
համարի որ կարելի է զայն Զուլեյքերիոյ
նման չէզոք անկախ երկիր մ'ընել:

Վասպուրականը իր հին կառավարու-
թեան Արժրունեաց օրով ամենէն մար-
դաշատ երկիրն էր. այդ շրջանէն վերջը
երբ այլեւս հայը չէր անոր իշխողը, եր-
կիրը անապատ դարձած է. ներկայիս ալ
աւելի ողբալի է այդ դրախտանման եր-
կրին կացութիւնը: Թուրքը ճարտար է
դրախտը անապատ դարձնելու գործին մէջ:

Այն որ կ'երգէր.

«Թէպէտ վտար քաղքէ քաղաք կամ թափառ
Բախտն ու մարդիկ զիս հալածեն անգթաբար,
Այլ արդէն իսկ ազատութեան երբ վեհ ձայն,
Թուաւ բերնէս յանձն առի զայս վիշտս համայն»:

Փորթուգալեան Մկրտիչն էր, ազգիս
ամենէն սիրուած մաքուր գործիչը, որ

իրօր Հայաստան ու Եւրոպա թափառա-
կան՝ ամէն վիշտ յանձն առած անարատ
պահեց ազգասիրութեան դրօշը: Այդ
դէմքը թէեւ շատ ծանօթ. Միք. Նաթա-
նեան զայն կը ծանօթացնէ, ամէն անոնց
որոնք շուտով կը մոռնան հայ գործիչ-
ներու անմոռանալի յիշատակը:

Վանայ անմոռանալի մտքի լուսաւո-
րիչներն էին Խրիմեան Հայրիկ, Սրուանձ-
տեանց Գարեգին, Վլթանէս Տէվկանց,
Տիգրան Ամիրզանեան, Համբարձում Ե-
րամեան, և ուրիշներ գերագոյն ճիգերով,
ինչպէս կը գրէ Խաչիկ Քհչյ. Գոռզեան՝
Վանայ մտաւորական զարգացման ամենէն
լուսարծարձ ջահակիրներն եղան:

Անկուսակցական Ե. Խ. Ռշտունի շատ
լուրջ դատողութեամբ հայուն հոգեբա-
նութիւնը կ'ուրուագրէ «Հայրենիքիս Յու-
շերէն» վերնագրով իր մէկ գրութեան մէջ:
Վանեցի է ան, ծնած Գաւաշ գաւառի Նոր
Գիւղի մէջ: Արագ շարժականաբար տպաւո-
րութեամբ կը յիշէ և կը յիշեցնէ իր եր-
կրին և մեր ազգին էական և բնական ու
պատմական տուեալութիւնները և պակա-
սութիւնները: Չ'ուրանար հայկական աշ-
խատասիրութիւնը, կ'ըսէ թշնամին. «Մենք
կ'աւրենք, կեաւորները լաւագոյն կերպով
շինել գիտեն»: Մենք ըստ Խորենացիին
«Ազգ բարբարոս» սակայն դարերու ըն-
թացքին ազնուացած և աւելի մարդասէր
եղած ենք քան քաղաքակիրթ համարուած
ազգերը: Մենք եկեղեցասէր և բարեպաշտ
ենք. ժամուն կոչնակը մեզի շատ հաճելի
է եղած, մենք չենք մոռնար Աստուծոյ
տունը, մենք եկեղեցի կ'երթանք ոչ թէ
եկեղեցականին կամ Տէր Հայրին հաճելի
լինելու համար, այլ Աստուծոյ օրհնու-
թիւն առնելու անկեղծ հաւատքով կ'եր-
թանք կը համբուրենք քաղերը նուիրական
տաճարին. կ'աղօթենք մեզի և մերիննե-
րուն համար, կ'աղօթենք դուռ դրացիին,
չարկամին, բարեկամին համար, կ'աղօ-
թենք որ խեղ ու խռով, թշնամութիւն և
ատելութիւն անհետի և սէր ու խաղա-
ղութիւն տիրապետեն: Կարգ մը կաղ
մտքերու նախապաշարումին դեղահատ կը

համարում Ռշտունի այս խօսքերը. «Հայ-կական ջարդերը Բեղափոխութեան շարժման վերագրել ոչ միայն ակներեւ իրողութեանց դէմ ընթանալն է, այլ ի զուր տեղ զիրար խծբծել, իրարու թշնամանալ և ասանկով թշնամին ուրախացնել ըսել է: Ո՞վ է այն ազգն ու ժողովուրդը, որ բոլորովին զերծ մնացած է իր դարուն մէջ ունեցած ընկերական, քաղաքական, կրօնական շարժումներէն: Այսօր Ամերիկայի և Եւրոպական ուրիշ երկիրներու մէջ կան պոլշեակներ և իրենց պրօպագանդիստները, այդ չի ցուցներ երբեք թէ այդ ազգերը պոլշեակ են»:

Հայկ Աճէմեան, Հ. Աւիշանի «Յուշիկներ»-ու տպաւորութեան տակ ուխտի կ'ելլէ Վասպուրականի նուիրական տաճարներուն, շիրիմներուն, վանքերուն, այգիներուն, լեռներուն ու բերդերուն:

Հետաքրքրական է Վասպուրականի ստուգաբանութիւնը. Վաս — բարձր, սրբ — որդի, քեան — երկիր. «Ուրեմն, կ'ըսէ, եթէ ենթադրենք որ Վասպուրական առանձն պարսկերէն է, պիտի ընդունինք որ կը նշանակէ՝ «Երկիր որոյնց մեծամեծաց»:

Պ. Հայկ Աճէմեանին օգտակար կը համարիմ յիշեցնելու, որ Հ. Ղուկաս Խնձեան իր «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» ստուար հատորին մէջ մեր բնաշխարհի այս ութերորդ նահանգին վրայ երկարօրէն կը խօսի, և այդ երկրամասը Արժրունեաց տոհմին սեփական ըլլալով՝ կոչուած է Աշխարհ կամ Երկիր Արժրունեաց, Գառառ Արժրունեաց, Գառառ Վասպուրականի, Տերտրիւն կամ Թագաւորութիւն Վասպուրականի. ըստ Կոստանդին Պերսիերուժէնի՝ Վասպուրագագու և բնակիչներն Վասպուրագակեայք. ըստ Գետրեմիոսի Ասորագանի, վերին մարք. ըստ Յովհ. Գուրբաղատայ՝ Վասպուրակ. ըստ Ստրաբոնի՝ Վասպուրեստա: Թովմաս Արժրունի կը գրէ. «Բարձրագոյն և Սեպհական (արժրունեաց) Վասպուրականն կոչեցեալ նահանգ»:

Սեւ ու կարմիր յուշերուն ու փուշե-

րուն մէջ կան նաեւ Վասպուրականի ԲԵՆԱՐԻՆ պարծանք երգի փշրանքներ և ծաղկեփունջ մը հանճարեղ սիրերգու վանի խառակոնիս գիւղի ծնունդ ֆուշակէն. կարելի չէ՝ մոռնալ անոր պանդուխտի երգին այս տողերը.

«Ինկեայ թաղէ թաղ աղէ մը ճարիցի,
Տըռի թապաղէ մը թըղթիկ առիցի,
Աջքիս արտըսունք թանաք արիցի,
Շողշողուն մատներս կալամ արիցի,
Աբրտիս տարտերն էլ տավթար արիցի,
Նըստայ կարիքիս նամակ գրիցի...»:

Այս ստուարահատոր գրքին փառապսակն է Բեղափոխական Վասպուրականի 167 երկսիւն մեծագիր էջերու մէջ ամփոփուած նշանաւոր և աննշան հայ գործիչներու կենսագրականը: Այդ բառագիրն է ամէն այն ռազմիկներուն՝ որոնք կըռուեցան հայկական անկախութեան համար: Հայկ Աճէմեան առանց կուսակցական խարխափումներու յիշած և արձանագրած է անուններն և գործերը մեռնող և ապրող ռազմիկներուն:

Երկասիրութիւնս ինքն իր մէջ նորութիւն մը չէ. թերթերու և նման ուրիշ զանազան հատորներու մէջ ստեպ գրուած է Վանայ և Վասպուրականի դիւցազնական դէմքերու և դէպքերու վրայ: Հայկ Աճէմեան կը մասնաւորէ իր աշխատութիւնը միմիայն Վան քաղաքի և Վասպուրականի շրջանակին մէջ. խմբագիր բանասէր հեղինակը ամէն ճիգ թափած է այս հատորին կատարելութեան համար, և սակայն ինքն իսկ համեստօրէն կը ճանչնայ անոր թերի կողմերը: Ամէն պարագայի «Վասպուրական»-ը ռազմիկ գրականութեան մէջ կը մնայ ամենէն շքեղ ու գեղաքանդակ յուշարձանը. պատիւ հեղինակին և իր աշխատակից գրողներուն. անթիւ և գեղատիպ նկարներն ալ անգամ մ'եւս պերճօրէն թարգման կ'ըլլան Ս. Ղազարի Միսիթարեան նըրբաճաշակ տպագրութեան արուեստին:

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

ՎԵՆԵՏԿՈՅ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՅՈՒՅԱԶԱՆՈՒԹԵՄ

(ԺԸ ԵՐԿԱՄԵԱՅ - 1932)

Իր երեսունհեռթնամեայ գոյութեան շրջանին՝ Վենետիկ գեղարուեստի Միջազգային երկամեայ ցուցահանդէսը ստեղծած է և պահպանած շարունակաբար գերազանց ճաշակը Արուեստի մշակոյթին մէջ՝ յարաճուն զարգացումով գաղափարներու փոխադարձ տուրեւտին ազգերու միջեւ, Արուեստի տիրապետութեան սահմաններուն մէջ:

Հազարաւոր նկարներուն մէջ, որոնք կը ներկայացնեն արուեստի գիտական կերպերը, դըպրոցներն ու ձգտումները, այս տարուան ցուցահանդէսը մեզի կ'ընծայէ շարք մը հին հաւաքածոները Խալկական նկարիչներու՝ անցեալ դարու ծոցին մէջ թաղուած անտես:

Ասոնց մէջ սակայն երեք աստղեր կան, այնպիսիներ՝ որոնց փայլը երբեք չի նուաղիր. աստղեր՝ որոնք կը տեղադրեն ամէն ինչ որ գիրենք կը շրջապատէ:

Այդ երեքսկ աստղերն են Յաւոր Ֆաւրետթոյ (Favretto), Յրանկեպոյ Փալլոյ Միքէլլի (Michetti) և Յոսեփինո Պոլլի (Boldini) որ երեքին մէջ ամենէն երկարակեացն եղաւ:

Յ. ՖԱՒԵՐԵԹՈՅ (FAVRETTO)

Եւ. ի Վենետիկ 1849ին, Գեղարուեստի ճեմարանին ուսմանց հետեւեցաւ 1865էն 70ին, յետոյ թեւակոխեց այն փառապանծ շաւիղը ուր գոհարներ սփռեց իր բնիկ վենետիկեան հանճարով:

Ճեմարանի յարկին հրաժեշտ տալու օրէն ի վեր՝ ան նկարներու անթիւ շարք մ'արտադրեց. բայց մենք կանգ կ'առնենք միայն անոնց վրայ որոնք գիրքն յայտաբերեցին աշխարհի որպէս բացառիկ նկարիչ, միայն անոնց վրայ՝ որոնք զինքը պարագլուխ կարգեցին Վենետիկեան արդի դպրոցին. դպրոց մը որ ծնունդը կու տար նոր ուղղութեան մը, ամբողջովին լի եւ գեղուն երիտասարդական խանդով, ինչպէս կը տեսնուի այս երկամեայ ցուցահանդէսին մէջ:

Մենք հիացումով պիտի նկատենք այն գործերը որոնց մէջ հեղինակը կը տեսնուի մին այն մեծ արտիստներէն որոնք դասական եւ վիպական շրջանէն վերջ գիտցան արուեստն իր արժէքին եւ բարձրութեան մէջ պահել:

Այս արուեստագէտին համար փառքի ասպարէզ դարձան բոլոր Միջազգային ցուցահանդէսները որոնք կը կազմակերպուէին ամբողջ Խալկոյ մէջ խալկական միութեան առաջին տարիներուն, հոն իրարու ծանօթացան նոր սերունդները, և ուխտ ըրին նկարչութիւնը ձերբազատել դասականութենէն և դառնալ իրապաշտութեան և վերադարձնելու նկարչութիւնը իր յաւերժական աղբերակներուն՝ որոնց վերադառնալու սահմանուած է պարբերաբար բնութեան անխախտ օրէնքներով:

Հետեւաբար ան եղած է ձյնաւորիկ և քնռքեան նկարիչը, և ասոր համար է որ իր գործերուն մէջ կը զգանք մեծ անձնաւորութիւնը որ կ'արտացոլայ կենդանի իրականութենէն առած ձեւերուն մէջ զորս ազատօրէն ընտրած և ուսումնասիրած է:

Ֆաւրետթոյ իսկապէս նկարիչն է վենետիկեան ժողովրդական կեանքին, ըլլայ իր օրերուն՝ ինչպէս Վենետիկեան Եօթնհարիւրին (1700):

Եւ այս այնպիսի անուրանալի իրողութիւն մ'է որ հարկ կ'ըլլայ պնդել թէ երկու շրջանի մէջ ապրած է ան. վասն զի միշտ, իր արուեստագէտի ամբողջ ապրումի օրերուն, իրեն ժամա-